# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## N ՀՀ Ո ՄԱԾՁԲ-ՏՍԿ-ԾՈ-2020/Ա-38 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** <<11>> 12 . 2020թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Գզրարյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 20.02.2020թ.-ին կնքված **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-ՏՍԿ-ԾՈ-2020/Ա-38** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետը՝ Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-ՏՍԿ-ԾՈ-2020/Ա-38** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **7,000,000 (յոթ միլիոն)** ՀՀ դրամ գումարը սահմանել **1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, որը պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | «Տոյոտա Երևան» ՍՊԸ |
| ք.Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Բայրոնի փող. 3 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության Աշխատակազմի գործառնական վարչություն | Ամերիաբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011021947 | Հ/Հ 1570003667300100 |
| ՀՎՀՀ 01533334 | ՀՎՀՀ 01557589 |
| Հեռ. 010 596039 | հեռ. 010 77-70-10 |
| Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru | Էլ. փոստ: info@toyota.am |
| ____________ Վ. Մովսիսյան | ____________ Վ. Գզրարյան |
| /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ (ստորագրություն) | (ստորագրություն) տնօրեն |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
11.12. 2020թ.
*ՀՀ Ո ՄԱԾՁԲ-ՏՍԿ-ԾՈ-2020/Ա-38 ծածկագրով գնման պայմանագրի*

**Վճարման ժամանակացույց**

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. բյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | 50111130/1 **Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ** | | | | | | | | | | | | 1 250 000 | 1 250 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ոստիկանություն**
**ք.Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**Աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011021947**
**ՀՎՀՀ 01533334**
**Հեռ. 010 596039**
**Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru**

____________ **Վ. Մովսիսյան**
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Տոյոտա Երևան» ՍՊԸ**
**ք. Երևան, Բայրոնի փող. 3**
**Ամերիաբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 1570003667300100**
**ՀՎՀՀ 01557589**
**հեռ. 010 77-70-10**
**Էլ. փոստ: info@toyota.am**

____________ **Վ. Գզողյան**
(ստորագրություն) տնօրեն
Կ.Տ